

Կարգադրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Յիշ 23



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՈՒՆԴԱՆԻ
ԴԱՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՈՒՆԴԱՆԻ
ԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՈՒՆԴԱՆԻ
ԴԱՐԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ هانراکيداق HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 23 || 7 ՅՈՒՆԻՍ 1903



ԷՏՄՈՆ ՌՕՍԹԱՆ

ԷՏՄՕՆ ՌՕՍԹԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒԹԻՒՆԸ

ՓՐԱՆՍԱԿԱՆ ԱԳԱՏԻՄԻ ՄԷՋ

Երբ Հանրի տը Պօրնիէ մեռաւ, իրեն յաջորդելու համար ներկայացող գանձաւորու մէջ էր էտմօն Ռօսթան: Անմահներու ժողովը զայն իր մէջ ընդունելու համար մէկ արդելք մը միայն տեսաւ՝ անոր տարապայման երիտասարդութիւնը: Որովհետեւ իր երեսուն տարեկան հասակին մէջ հռչակաւոր եղած էր տն իր երկու թատերերգութիւններով՝ Սիրամօ քը Պերժորա եւ Էկլօն: Ռօսթան ոտանաւոր կը գրէ արձակէն շատ աւելի զիւրութեամբ, իր տաղերը այնքան ներդաշնակ, այնքան սահուն են որ՝ եթէ իմաստ մըն ալ չունենային անոնք՝ դարձեալ ամենամեծ հաճոյքով պիտի կարդացուէին. թող որ Ռօսթանի սրամտութիւնը՝ իր սաղաջափելու արուեստէն ալ բարձր է: Ընտրութիւնը կատարուելէ և տնհրաժեշտ ձեւակերպութիւնները լմննալէ վերջ, Ռօսթան իր ապագայ ընկերակիցներուն սիրտը թունդ հանեց՝ յայտարարելով թէ ընդունելութեան ճառը ոտանաւոր պիտի գրէ: Համաձայն մերժումի մը առջեւ երիտասարդ թատերագիրը արձակ գրեց զայն, բայց անոր առաջին բառերէն իսկ ցաւ մը կը յայտնէր այդպէս ըրած ըլլալուն:

Սովորութիւն է որ ամէն նոր անդամ իր նախորդին գովաբանութիւնը կ'ընէ: Ռօսթան ամենամեծ դժուարութիւն մը ունէր այդ պարտականութիւնը կատարելու համար. իր նախորդը՝ Հանրի տը Պօրնիէ այն տեսակ ակադեմականներէն էր, որոնց անունը իրենց ընտրուած օրն ու մէյմըն ալ մեռած օրերնին՝ կը լսուի, և որու համար արժանի է ըսել

Mais un fait sauva sa mémoire:

Dans son fauteuil, insigne de gloire,

Il précéda, bravo, bravo!


L'illustre auteur de «Cyrano»

Եւ Ռօսթան այս երկու դժուարութիւններուն ալ յաղթելով անանկ սքանչելի ճառ մը արտասանեց որ ամէնէն քաջ արձակագիրներն իսկ չնորհաւորեցին: Առ ի չգոյե լաւագոյնի ի վեր հանեց իր նախորդին ազնուութիւնը, անբասիր կեանքը, «պզտիկ մարմինին մէջ մեծ հոգի մը» պարունակելը, անոր գլուխ գործոցը համարուած մէկ թատերերգութեան՝ La Fille de Rolandի գովասանքը ըրաւ, թէեւ կրնար աւելցնել թէ... Ռօլան աղջիկ չունէր: Ռօսթանի ճառը անյազութեամբ մտիկ ըլլուեցաւ, որով-

հետեւ անոր արտասանութիւնը երգ մըն է կարծես, ձայնին ելեւէջները, շեշտերու ներութիւնը կատարեալ եղած է իր քով:


Ակադեմիոյ կողմէ պատասխանեց Մէլքիօր տը Վօկիւէ դերկոմսը: Աս ալ նշանաւոր հրապարակախօս մըն է եւ իր ճառը լեցուն էր նրբութիւններով: Հանրի տը Պօրնիէի կեանքին վրայ ակնարկ մը ձգելէ վերջ անցաւ Ռօսթանի գործերուն վրայ. ապա կադեմականները ճիշդ այդ կէտին է որ կը քաշքշեն քիչ մը իրենց նորեկ ընկերակիցը. սակայն Ռօսթանի գործերը խժբժանքի տեղեր չունէին: Տը Վօկիւէ յիշեց թէ երիտասարդ բանաստեղծը կը պատկանէր ընտանիքի մը որու անդամները քանի մը սերունդներու մէջ բանաստեղծներ ու միւզիսիւններ տուած են միայն, մէջը հաշուելով նաեւ Ռօսթանի հայրն որ ոտանաւոր գրած ժամանակ յանգերը իրար չկրնալով յարմարեցնել... ոտքերը հաւասար բերելով կը բաւականանար: Յիշեց նաեւ Տիկին Ռօզէմօնտ Ռօսթանը, որ իր ամուսինին պէս ամէնէն սիրուած բանաստեղծ մըն է:

Ընդունելութեան սրահը հիանալի կերպով զարդարուած էր և « ասեղ ձգես տեղ չկար » ի ժողովրդական առածը խիստ լաւ պիտի յարմարէր այն բազմութեան որ Քուբօյի տակ խռնուած կը ներկայացնէր Բարիզի հարուստ դասակարգն եւ երեւելի գրագէտներու խումբը: Երկու ճառերն ալ երկարատեւ ծափահարութիւններու մէջ մարեցան:



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ



15. — Ստելլ մեկուն անիրաւութիւն կը պատճառէ

Հին գրքի մը մէջ պատմութիւն մը կայ, որ գուք լաւ գիտէք: Այս պատմութիւնն է տղայի մը որ իր ըրած մէկ յիմարութիւնը չխոտտովանելու համար թոյլ տուաւ որ իր ընտանիքէն մէկը իբրեւ յանցաւոր պատժուի: Իր հայրը մայրը չուզեցին այլ ևս ունէն յարաբերութիւն ունենալ անոր հետ. երբեմն այնչափ միացած ազգականներու մէջ խռովութիւն ինկաւ եւ մեղադրուած անձնաւորութենէն բաժնուեցան, այն անձը ամէնքէն լքուած մեռաւ խեղճութեան և կարօտութեան մէջ:

Դուք երբեք չեք գիտեր, քե սուսի մը հետեւութիւնը ինչ կըլլայ, բայց կրնամ վստահ ըլլալ, որ մեկուն աղետաբեր կըլլայ: Կրնայ պատահիլ, որ միշտ մէկը ձեր ստախոսութեան պատիժը կրէ եւ կամ ոմանք երկար ժամանակ եւ ոմանք ընդ միշտ կը նեղուին: Տեսէ՛ք ուրեմն զձեզ արդարացնելով ձեր ըրած ստախոսութեան անիրաւ հետեւութիւնը: Երբ ո՛ր է առարկայ մը աներեւութանայ, եթէ գողցուած չէ, ու մէկը գտնէ զայն ջարդուած՝ անշուշտ ինքնիրեն չէ կոտորուած, պէտք է մէկը կոտորած լինի: Եթէ դուք էք անմիջապէս ըսէք, մի՛ թողնէք, որ ուրիշը մեղադրուի: Սուքը միայն կարն ժամանակի համար կրնայ խօսողին օգտակար ըլլալ:

16. — Ինչո՞ւ համար պե՛տք է ուրիշին գաղտնիք պահել

Անգամ մը մարդ մը կար, որ երկար ճամբորդութիւն մը պիտի ընէր. ոսկիով լի տուփ մը յանձնեց իր դրացիին: Դրացին խոտացաւ պահել առանց ձեռք դպցնելու: Տուփը իր դարակներուն ամէնէն խոր անկիւնը պահեց եւ ապահովեց ճանապարհորդը, թէ այնպէս պիտի պահէ իբրեւ թէ իրեն բան մը տրուած չէ, մէկ խօսքով տուփը քովը ըլլալը պիտի մոռնայ:

Բայց երբ ճամբորդը մեկնեցաւ, դրացին գնաց տուփը հանեց, բարեկամներուն ցցուց, բացաւ ոսկիներն առաւ եւ անոնց հետ մէկտեղ ծախսեց:

Ի՞նչ կը խորհիք այս գործին վրայ: Այդ դրացին գող մ'էր, այնպէս չէ՞:

Փաղտնիքներ կան, որ առաւել քանկազին են քան ամենաքանկազին տուփը: Երբ մէկը իր գաղտնիքը բարեկամներուն կը վստահի, նա պէտք է ամէնայն խնամով պահէ մտքին մէջ, պէտք է մոռնայ: Եթէ երեւան հանէ՝ վերեւ կարդացած պատմութիւններուդ պէս կ'ընէ, այն ալ տեսակ մը գող է. բարեկամին գաղտնիքը կը գողնայ եւ իր ծանօթներուն կը բաժնէ, ինչպէս դրացին կը բաժնէր ոսկիները: Փաղտնիք մը լսողին չպատկանիր, այլ միտք զայն ըսողին: Երեւան հանելը գողութիւն է:

15. — Անիրաւութիւն

Անցեալ տարի, Մարգարիտ խենդութեան վայրկեանի մը մէջ մեծ յանցանք մը գործեց: Իր երեք բարեկամուհիները գիտցան այդ յանցանքը: Ոչ ոքի խօսեցան այդ մասին, բայց իրենց միտքը պահեցին ու այլ եւս չուզեցին Մարգարիտին հետ տեսնուիլ:

Բայց Մարգարիտ իր ըրածին վրայ զղջաց, ներողութիւն խնդրեց իր ըրած անմոռութեանը համար, իր պատիժը կրեց եւ անկէ ի վեր զգոյշ էր, լուռ, աշխատող, որովհետեւ զգաց, թէ պէտք է ըրած գէշ գործին հետքը անհետացնել, մէկ խօսքով օրինակելի ընթացք մը ունեցաւ: Սակայն երեք բարեկամուհիները անհաշտ մնացին. անա անխառնութեամբ:

Տղա՛ք, յիշեցէք, որ այդ երեք փոքր աղջիկներու ըրածը լաւ է: Մենք իրաւունք չունինք դատաւոր ըլլալ մեր նմաններուն հոգւոյն մէջ անցած բաներուն: Մենք պէտք է մոռնանք անոնց անցեալը, երբ յետոյ իրենց ընթացքը կը բարւոքեն: Մեք պէտք է ներողամիտ ու բարի լինինք, երբ կը փափաքինք որ ուրիշները մեզ հետ աչքապէս լինին: Ձեզմէ ո՞ր մէկը կրնայ վստահ ըլլալ թէ բնաւ պէտք պիտի չունենայ ներողութեան:

18. — Ուրիշին կեանքին դէմ պէտք չի վնաս պատճառել

Ի՞նչ հարկ այսքան տխուր բանի մը վրայ խօսիլ: Աւա՛ղ, ի՞նչ պէտք է ընել: Կը տեսնուին այնպիսի կիներ, որ մարդասպանութեան գորաւոր հակում ունին: Այսպիսիներ տեսնուած են եւ երբեմն ալ կը տեսնուին: Յաւինք թշուառներուն վրայ, որ անշուշտ ջղագրգռութեան վայրկեանի մը մէջ այդպիսի ոճիւր կը գործեն:

Սակայն, առանց սպաննել ուղեւոր, անխոհեմութեամբ կարելի է մէկուն կեանքը վտանգի դնել: Երբ տղայ են, կրնան վտանգաւոր խաղեր խաղալ, ընկերի մը ֆէնս հասցնել, բարկութեան վայրկեանի մը մէջ անոր դարնել սաստկութեամբ: Տեսնուած են դպրոցականներ՝ խեղանդամ դարձած եւ մնացած իրենց ամբողջ կեանքին մէջ այնպէս՝ տղայական կռուի մը մէջ ստացած հարուածէ մը: Տեսնուած են նաեւ ուրիշներ կաղ կամ ախտաւոր մընացած, որ փոքրիկ ընկերի հետ վէճի կամ բարկութեան ժամանակ գետին նետուած են:

Տղա՛ք, այս հայեցակէտով զգուշացէք, խորհեցէք թէ պարտիք ձեր ընկերներու կեանքը եւ առողջութիւնը յարգել: Հասարակ վէճերը եւ փոքրիկ կռիւները կը մղեն առանց նշմարելու կոչութեան եւ կատաղութեան:

19. — Ճարպիկ ձեռք

— Ես չար չեմ, կ'ըսէ Ալեքսան, բայց « ճարպիկ » ձեռք ունիմ:

Ալեքսան շատ դիւրաւ ինքզինք կ'արդարացնէ: Իր « ճարպիկ » ձեռքը միշտ պատրաստ է հարուածելու իր ընկերով դէմքը՝ անոր հետ ունեցած կռուին վրէժը առնելու համար: Այդ ճարպիկ ձեռքը օր մը իր գլխուն գէշ փորձանք մը պիտի բերէ:

Օր մը երկու փոքրիկ աղջիկներ կը վիճաբանէին: Անոնցմէ մէկը Ալէքսանի պէս ճարպիկ ձեռք ունէր: Իրեն տրուած անհաճոյ պատասխանի մը վրայ երկու զօրաւոր ապտակ իջեցուց ընկերին երեսին: Ծեծուող ընկերը այս անակնկալ հարուածէն խելքը կորսնցուց եւ այնպէս ուժով գետինը ինկաւ, որ չորս ատամները կոտրեցան: Ճիշտ առջեւի ատամներն էին եւ տղան խաթարուած պիտի մնար եթէ ատամնաբոյժ մը արհեստական ատամներ չչիւնէր: Բայց վիրաւորուած տղին ծնողքը յարձակեցան «ճարպիկ» ձեռք ունեցող փոքրիկ աղջկան ծնողքին վրայ, եւ ասոնք ստիպուեցան բաւական մեծ գումար մը վճարել իրբեւ տուգանք:

Ահա զարնելու գէշ սովորութեան արդիւնքը, այս նիւթական արդիւնք է, բայց այս չէ միայն, որովհետեւ բարոյական տեսակէտով զարնող տղան կ'ստորմանայ այս բռնութեան եւ կոտորեան պատճառով:

20. — Ուրիշին ստացուածքը յարգեցիք

Ուրիշին ստացուածքը այսինքն հող՝ եթէ նա ունի, իր տունը եթէ ունի կամ իր հագուստները, իր գործածութեան առարկաները և իր ստակը:

Երբ փոքր աղջիկ են, նոյն իսկ շատ պատուաւոր, կրնայ պատահիլ, որ շատ խլիմսութեամբ չեն յարգեր ուրիշին ստացուածքը:

Ճանապարհէ մը կ'անցնին, շատ տաք է, ծառէ մը պտուղներ կը քաղեն, այգիի մը մէջէն խաղող, առանց խորհելու ուրիշին պատճառած ֆլասին վրայ: «Օ՛հ, կ'ըսեն, այս կալուածատէրը այնչափ պտուղ ունի. մեր քաղածները բան մը չեն:»


Ուրիշ անգամ մրգավաճառի քովէն չեն հեռանար առանց տուփի սալորէն հատ մ'առնելու, կողովէն չոր թուզ մը, ասոր համը կ'առնեն, անոր համը կը տեսնեն: «Օ՛հ, կ'ըսեն դարձեալ, այնչափ քիչ բան է այս:»

Կ'ուզէք ձեր պատճառած ֆլասը գիտնալ: Ենթադրեցէք. թէ ամէն յաճախորդ տուփէն սալոր մ'առնէ, ահա շուտով ծառը առանց պտուղի կը մնայ և տուփը պարապ: Ո՞վ կը ֆլասուի այս բանէն. կալուածատէրը, ձեր թողուցած մրգավաճառը:

Երբեք այնպիսի գործ մի՛ ընեք, որուն ուրիշները նմանելով մեկուն վնաս կը պատճառեն:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ԼՈՂԵՂԱԼՈՒՍ



Ժամ գացէ՛ք, տըղա՛ք, Խունտ հաւախօսին՝
 Հագուած փափկօրէն,
 Քաղցրիկ մըմունջներ մեղրի՛ պէս հոսին՝
 Ձեր վարդ շուրթերէն,
 Եկեր է, ահա՛ մեծ Պենտէկոստէ,
 Դաշտեր կը վառին,
 Շէնշող ծառէ ծառ՝ արտոյտ կ'ոստոստէ՝
 Թափով անհնարին.
 Հովիտ ու ծործոր՝ բեհեզ են հագեր՝
 Կապոյտ սընդուսի:
 Պիւլպիւլն է՝ գոհար վարդին վրայ երգեր՝
 Հիւսել կը սկսի:
 Անթիծ զըրզանքով՝ սիրտերն օծանուտ՝
 Դրախտին փափկութեան,
 Դէպի վե՛ր՝ կապոյտն իղծեր հրբանիւծ՝
 Կը Թըռչին կ'երթան.
 Ժամուն մէջ ամէն, ամէն բան խորհուրդ՝
 Խունկ, մոմ, շարական,
 Սուրբ հոգի կ'առնէ բոլոր ժողովուրդ՝
 Խանդով հոգեկան:
 Հաւատք, յոյս ու սէ՛ր՝ ծրարուած նկարէն՝
 Խունկի՛ր ամպերուն:
 Սուրբ Հոգւոյն զալուստ կը փառաւորեն՝
 Կեանքով պարարուն:
 Իղծե՛ր սըլացիկ՝ վե՛ր դէպի կամար՝
 Կ'ելլեն Արարչին,
 Օրհներգութեանց մէջ անհուն, անհամար՝
 Խաղաղ կը հանգչին:
 Օրհնեա՛լ է յաւէտ Մեծ Պենտէկոստէ,
 Դէմքեր Խո՛ղ վառին,
 Շէնշող մանկըտին վեր վար ոստոստէ՝
 Թող լա՛յնքն անտառին:
 Եկէ՛ք, հագուեցէ՛ք, տըղա՛ք, փափկօրէն՝
 Լոյս հաւախօսին,
 Մեղրուտ մըմունջներ ձեր վարդ շրթներէն՝
 Ամէն կողմ հոսին.

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

Ն Ե Լ Լ Օ Ն

Ե Ի

Պ Ա Յ Բ Ա Յ Ը

Այդ գիշերը ջաղացում հրդեհ պատահեց։ Ամբարները եւ շատ ցորեն այրուեցան. միայն ջաղացպանի բնակարանն անվնաս մնացին։ Ամբողջ գիշերը սարսափած դուրս վազեց փողոց, իսկ քաղաքից շուտով վրայ հասան հրչէջները։ Ջաղացպանի բոլոր կայքը ապահովագրած էր, ուստի նա որ եւ է կորուստ չունեցաւ. այնուամենայնիւ նա սաստիկ կատաղած գոռում էր՝ իբր թէ տունը կրակ են տուել։

Նեյլօն գիշերը արթննալով՝ վազեց որ ուրիշների սէս ինքն էլ օգնէ։ Բայց կօգէզը կոպտութեամբ հրեց նրան ասելով.

— Երեկոյեան դու թափառում էիր այս տեղերքը և հրդեհի պատճառն էլ քեզ շատ լաւ յայտնի պիտի լինի։

Նեյլօն լսում էր եւ շատ էր զարմանում, որ ջաղացպանն այսպիսի րոպէում կարողանում է կատակ անել։

Բայց ջաղացպանը միեւնոյն բանը կրկնեց նաեւ հետեւեալ օրը, եւ գիւղում լուր տարածուեց, իբր թէ Նեյլօն անյայտ պատճառով թափառելիս է եղել ջաղացի մօտերքը և իբր թէ նա վաղուց ատելիս է եղել ջաղացպանին, որովհետեւ վերջինս արգիլել է նրան փոքրիկ Ալօիգի հետ խաղալ։ Ամբողջ գիշերը հարուստ ջաղացպանի շուաքիցն անգամ դողում էր, և նրան հաճոյանալու համար ամէնքն էլ սկսեցին սառը եւ կասկածանքով վարուել Նեյլօի հետ։ Թէպէտ երեսին բան չէին ասում, բայց նա նկատում էր, որ ամենքի յարաբերութիւնը փոխուել է դէպի ինքը։ Անմեղ եւ միայնակ Նեյլօն անկարող էր կռուել հասարակական կարծիքի դէմ։

— Դու շատ խիստ ես վերաբերում այն տղային, մի անգամ ասաց ջաղացպանի կինը իւր ամուսնուն. նա շատ ազնիւ եւ պատուական տղայ է, և թէեւ դու նրան վիրաւորել էիր, բայց նրա մտքովն էլ չէր կարող անցնիլ մի այդպիսի յանցանք գործել։

Բայց կօգէզը յամառ բնաւորութեան տէր մարդ էր. որքան էլ անիրաւացի լինէր իւր արածը՝ նա երբէք յետ չէր կանգնի։

Նեյլօն հպարտութեամբ և համբերութեամբ տանում էր այդ անպատուութիւնը։ Միայն Պատրաշն էր հասկանում նրա ցաւերը. Յաճախ Նեյլօն ասում էր ինքն իրան. «Եթէ ես պարգեւ ստանամ կարելի է այն ժամանակ խղճան ինձ վրայ»։

Բայց այնուամենայնիւ տասն եւ հինգամեայ պատանին, որ իւր ամբողջ կեանքը ունց էր կացել գիւղական փոքրիկ շրջանում եւ ամենքից ուէր ու համակրանք վայելել՝ այժմ շատ վշտանում էր, ահեստելով որ այդ փոքրիկ շրջանը իրանից երես է կարճնում: Ծանր էր մանաւանդ այսպիսի ցուրտ ձմեռ ժամանակ, երբ ուրիշների տանը նա պէտք է մի տաք լուսաւոր անկիւն գտնէր: Գիւղացիները ձմեռը աւելի մօտ էին լինում՝ միմեանց. իսկ Նելլօի եւ Պատրաշի վրայ այս անգամ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում: Խեղճ երեխան իւր շան հետ մնացել էր ցուրտ սենեակի մէջ դռնն ճակատագրին մատնուած: Շատ անգամ նըրանք առանց հացի էին մնացել, որովհետեւ քաղաքից մի ուրիշ մարդ էր գալիս գիւղ և կաթն առնում տանում էր ծախելու, միայն երեք-չորս ընտանիք էին մնացել որ Նելլօին էին յանձնում իրանց կաթը ծախելու: Այսպէս ուրեմն Պատրաշի բեռը շատ թեթեւացաւ, բայց Նելլօի գրպանն էլ բոլորովին դատարկուեց: Պատրաշն առաջուայ նման կանգ էր առնում բոլոր դռների առաջ. որոնք այժմ փակուում էին նրա համար: Եւ խելացի շունը խղճալի կերպով լուռ և յանդիմանական հայեացք էր ձգում նըրանց վրայ ու անցնում էր:

Հարեւանների համար շատ ծանր էր իրանց դռներն ու սըրտերը փակել նրանց առաջ և տեսնել թէ ինչպէս Պատրաշը քաջ է տալիս դատարկ սայլակը, բայց այդ անում էին մի միայն կօշ գէղին չգրգռելու համար:

Ը.

Ծննդեան տօնը մօտենում էր: Խիստ սառնամանիքը սկսուել էր. շատ ձիւն էլ եկել, իսկ գետի սառոյցն այնպէս էր տարացել, որ նրա վրայով ազատ անցնում էին թէ՛ ձիով և թէ՛ ոտով: Ծննդեան տօներին այս գիւղի բնակիչները առհասարակ շատ ուրախ ժամանակ էին անցկացնում: Ամենախեղճ ընտանիքներն անգամ ուտում էին անուշաճամ թխուածքներ եւ քաղցրաւենիք. զանազան խաղեր էին սարքում, պարում էին. ամեն տեղ պատերը զարդարում էին սրբերի շաքրէ փոքրիկ արձաններով: Զիւնների վզից կախած զանգակները ուրախ-ուրախ հնչում էին: Իւրաքանչիւր խրճիթում տաք կերակուր էր պատրաստում: Զուգուած աղջկերքը գոյնգոյն հագուստներով գնում-գալիս էին եկեղեցի. նրանք ուրախ-զուարթ ասուլիս էին անում և ծիծուղում. միայն մի փոքրիկ խրճիթում խաւար էր եւ ցուրտ:

Նելլօն ու Պատրաշը աշխարհիս երեսին միայնակ էին մնացել: Հէնց տօներից մի քանի օր առաջ մեռաւ խեղճ ծերունի Յովհաննէս Գաասը, որ իւր կեանքն անց էր կացրել վշտերի ու տան-

ջանքների մէջ: Նա վաղուց արդէն անգամալոյծ էր եւ հազիւ կարողանում էր խօսիլ, միայն իւր սէրն էր որ ոգեւորում էր նրանց սաստիկ վշտացրեց: Նրանք դառն արտասուք թափելով՝ դադարի հետ գնացին մինչեւ փոքրիկ եկեղեցու մօտի գերեզմանատունը: Բացի նրանցից ուրիշ ո՛չ ոք չափստաց, ո՛չ ոք չյիշեց խեղճ, բարի ծերունուն:

«Երեւի այժմ սա կը մեղմանայ դէպի Նելլօն և թոյլ կըտայ նրան մեզ մօտ գալ», մտածում էր ջաղացպանի կինը, նայելով իւր ամուսնու վրայ, որ օջախի առաջի նստած ծխում էր:

Կօփէզը հասկանում էր կնոջ միտքը, բայց նա սաստիկ յամառ էր, եւ երբ հանգուցեալի անշուք դադարը նրանց տան մօտով անց էին կացնում, նա իւր դուռն անգամ չբացեց: «Այդ տղան մուրացկանի մէկն է», յամառութեամբ մտածում էր նա, «ես չեմ կամենում, որ նա խաղայ Ալօիզի հետ»:

Ջաղացպանի կինը վախենում էր իւր մարդուն և չէր համարձակում նրան բան ասել, բայց երբ տեսաւ, որ Նելլօն գերեզմանատանից յետ է դառնում՝ նա Ալօիզին անթառամ ծաղիկներից հիւսած մի պսակ տուեց եւ հրամայեց, որ տանի գերեզմանի վրայ դնէ:

Նելլօն ու Պատրաշը կոտորուած սրտով տուն վերադարձան: Ծակատագիրը նրանց հալածում էր. բանից երեւաց, որ նրանք զրկւում էին նաև իրանց վերջին մխիթարութիւնից—իրենց աղքատիկ, բայց թանկագին խրճիթից: Նրանք տանտիրոջ պարտ էին մի ամբողջ ամսուայ վճար, ուստի եւ նա դուրս արեց նրանց: Թաղումից յետոյ Նելլօի մօտ ոչ մի կոպէկ չէր մնացել: Նա փորձեց տանտիրոջից ժամանակ խնդրել, բայց անգութ եւ ժլատ գիւղացին չկամեցաւ սպասել: Պարտքի փոխարէն նա վերցրեց նրանց բոլոր աման-չամանը, բոլոր կենսական պիտոյքները և հրամայեց որ նրանք հէնց հետեւեալ առաւօտը բնակարանից հեռանան:

Ծուրտ ու խաւար սենեակում, հանգած օջախի առաջ, տըխրութեամբ անց կացրին այդ գիշերը տղան և չունը՝ միմեանց փաթաթուած: Նրանք սովոր է ցրտին, բայց վիշտը սառեցրել էր նրանց սրտերը:

Միւս առաւօտը, Ծննդեան ճրագալոյցի օրը, Նելլօն դառնապէս լաց եղաւ՝ իւր ընկերոջը կրծքին սեղմելով:

—Գնա՛նք, սիրելի Պատրաշ, չչնչաց նա, գնա՛նք, ընկեր, մեզ այստեղից դուրս են անում:

Նրանք կամացուկ հեռացան այդ տեղից: Այնքան վաղ էր, որ բոլոր պատուհանների փեղկերը դեռ փակ էին. միայն մի

քանի գիւղացի դուրս էին եկել փողոց, որոնք մինչեւ անգամ ուշադրութիւն էլ չդարձրին շան և տղայի վրայ: Մի տան առաջ նեւթի կանգ առաւ եւ անվստահ ներս նայեց. նրա պապը մի մեծ ծառայութիւն էր արել այդ տան բնակիչներին:

— Խնդրեմ մի կտոր հաց տուէ՛ք Պատրաշին, ասաց նա երկշտութեամբ, նա ծեր է եւ երէկ առաւօտուանից բան չէ կերել: Կինը արագութեամբ վրայ խփեց դուռը, փնթփնթալով՝ թէ այս թանգութեան տարին ի՛նչ ողորմութեան ժամանակ է:

Տղան եւ չունը յոգնած առաջ գնացին, ոչոքից այլեւս բան չխնդրեցին: Նրանք քաղաք հասան հէնց այն ժամանակ, երբ քաղաքային ժամացոյցը տասը խփեց:

«Ո՞ւր է. գո՛նէ մի բան ունենայի ծախելու, Պատրաշին հաց առնէի», մտածում էր նեւթի, բայց նա ոչինչ ունէր բացի իւր հասարակ շորերից եւ փայտէ հոգաթափներից: Պատրաշը հասկացաւ նրա միտքը եւ մտերմաբար իւր դունչը նրա ձեռին դրեց, կարծես խնդրելիս լինէր թէ իւր մասին անհանգիստ չլինի:

Կէսօրին պիտի յայտարարուէր այն բախտաւորի անունը, որ մրցանակ պիտի ստանար իւր նկարի համար: Եւ նեւթի ուղեւորուեց դէպի այն հասարական շինութիւնը, որտեղ թողել էր իւր նկարը: Այնտեղ մեծ բազմութիւն էր հաւաքուել: Նա երկշտութեամբ առաջ գնաց Պատրաշից բռնած:

(Մնացեալը յաջորդ թիւով)

Մ Ր Յ ՈՒ Մ Բ.

Երկրորդ Մրցումը շատ պատասխանողներ չունեցաւ դժբաղդաբար, այնպէս որ Հանրագիտակի Խմբագրութիւնը չկրցաւ իր յուսացածը ձեռք բերել, բայց կը շնորհաւորենք ի սրտէ առաջին մրցանակ չահող պարոնը, որ եթէ անկեղծ է իր ըսածներուն մէջ, իր առողջ, գործնական գաղափարներով, հաստատուն այդ կրթութեան շարունակուելովը գեղեցիկ ու ոսկեղինիկ ապագայ մը կրնայ պատրաստել իրեն համար, գործնական ոեւէ ասպարէզի մէջ, քանի որ ինքն առաւելապէս այս տեսակ ճիւղերու յօժարութիւն ու սէր ցոյց կուտայ, և իրաւամբ: Արդարեւ, ամէնքան գէշ բան մը կ'ընեն մեր նորահաս երիտասարդները, ամէնն ալ վերացական ասպարէզներու հետեւիլ ուղելով որ, անկարելի է բացատրել, բայց գոնէ արժանի ըլլային, դժբախտութիւնն այն է որ իրենք հարկ եղած պատրաստութիւնը երբեք չունին, այդ տեսակ վերացական բարձր ասպարէզներու հետեւելու համար: Այս մասին ձգելով ուրիշ անգամուան ընդարձակօրէն գրել ու խօսիլ, առ

այժմ խօսքս կը վերջացնեմ շնորհաւորութիւններս ուղղելով առ մրցանակաւոր պարոնը :

Մէկ քանի դիտողութիւններ միւսներուն համար . — Պարոն մը ցուցակ մը ղրկած է իր կարդացած գիրքերուն , որոնց մէջ բան մը չկար իր հասակին յարմար , վէպեր բոլորն ալ , բայց վէպեր՝ որոնցմէ ո եւ է օգուտ չի կրնար քաղել դպրոցական աշակերտ մը , ի՞նչ ուսաք կամ շահեցաք , Պարոն , կարդալով Լիոնքէի վէպերը : Հաճէիք պատասխանել : — Բայց ներեցէ՛ք որ ես տամ առաջին պատասխանը , ժամանակնիդ վատնեցիք ումպէտս :

Պ Բ . Ք .

Ի ստորեւ կը հրատարակենք երկրորդ Խրցումի մէջ առաջին հանդիսացող Պարոն Յ . Ն . Նիկողոսեանի գրութիւնն , եւ ինչպէս խոտաւորած ենք՝ Հանրագիտակի ներկայ Թիւն սկսեալ մէկ տարեկանը կը նուիրենք իրեն :

Ս Ի Ր Ի Խ Մ Ի Լ Ր Հ Ե Ս Ս

1. — Այժմ դպրոց յաճախելու բաղդը կը վայելեմ , ու բոլոր պէտքերն ծնողքս կը հոգայ , ոսկայն օր պիտի ըլլայ որ պիտի ստիպուիմ ձգել զայն , և ուրիշ դպրոցի մը ընթացքին հետեւիլ — չուկայի դպրոցը , նկատի ունենալով շահելու սկզբունքը որպէս զի ես անձամբ ճարեմ ապրելու միջոցները : Այժմէն խորհուրդը կ'ունենամ թէ երբ դպրոցը ձգելու ըլլամ ի՞նչ գործ ընեմ որ մի եւ նոյն ատեն սիրելի ըլլայ ինձ համար :

Անշուշտ շատ չպիտի զարմանաք երբ անմիջական կերպով արհեստներուն մէջէն վաճառականութիւնը ընտրեմ . առեւտրական դպրոցի մէջ է որ կը գտնուիմ , պէտք է որ յաճախած դպրոցիս համապատասխան ըլլան նախասիրած գործերս ալ : Սոսկ հաճելի զբաղում մը ըլլալու համար չէ որ կ'ընտրեմ վաճառականութիւնը ; այլ անոր բազմապիսի օգուտները լաւ հասկցած ըլլալու համար : Վաճառականութիւնն է արհեստաւորներուն եւ արուեստաւորներուն մեծ քաջալերութիւն կ'ըլլայ , տնոնց արտադրութիւնները սպառելու հրապարակներ գտնելով :

2. — Վաճառականութիւնը կը սիրեմ , հետեւաբար արհեստը սիրելու հակամէտ եմ , քան թէ արուեստը , այն պատճառներով որ նախ արուեստներու կոչում չեմ զգար մէջս , երկրորդ՝ իմ մասիս արհեստը աւելի նպաստաւոր կ'ընդունիմ ընդհանուր քաղաքակրթութեան համար քան արուեստը : Արհեստները մեր անհրաժեշտ պէտքերը կը հոգան , երկրագործները եւ հացագործները մեզի հաց կը հայթայթեն , մեքենագործութիւնը , վաճառականութիւնը միւս բոլոր արհեստները մեր անհրաժեշտ պէտքերը կ'ընձեռեն , իսկ արուեստը՝ վայրկեանական զուարթութիւն

և հաճոյք կ'առթէ մեզ: Կը տեսնենք գեղեցիկ նկար մը, կը յուզուինք կամ կ'ուրախանանք, կը կարդանք բանաստեղծութիւն մը, հեշտութիւն մը կը զգանք, կը լսենք նուագներու միահամուռ ներդաշնակ ձայնը, վայրկեանական հաճոյք մը կ'ունենանք, սակայն ասոնք նիւթապէս օգուտ չունին մեր կեանքին, երկրորդական պէտքերու կը վերաբերին: Ահա՛ թէ ինչո՞ւ համար արուեստէն աւելի արհեստը կը սիրեմ:

3. — Արհեստներուն կարեւորութիւնը խիստ շատ է, վառվռուն եւ գործունեայ մարդիկներ կը պահանջէ, ուստի մարդս ֆիզիքապէս կը զօրացնէ՝ անոր մկտնները բանալով, աշխարհը յառաջդիմութեան մէջ կը դնէ, արհեստաւորին ձեռքերն է որ մեր տունները կը շինեն, արհեստին ճարտարութեամբն է որ կը դիւրանայ մեր ճամբորդութիւնները, որով շատ մը դիւրութիւններ անոր կը պարտինք:

Մանաւանդ այն երկիրները որ արհեստով զարգացած են, արուեստով ալ կը զարգանան անկասկած. քանզի անհրաժեշտ պէտքերը հոգացուէին վերջն է որ մարդիկ երկրորդական վայելքներու հետեւելու առիթը կ'ունենան:

Ամսսիա

Յ. Ն. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԾԱՆՈԹԱԿՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

(Շարունակութիւն 22րդ թիւէն)

ԶԳԱՑՈՒՄԸ ԲՈՅՍԵՐՈՒՆ ՄԷՋ

Բնաւ չէ՞ք տեսած ծառեր՝ որ ճուղած կը մնան՝ անոր համար որ իրենց բնական միջավայրը անյարմար է իրենց, եթէ բոյսի մը բաւականաչափ սնունդ չի տրուի՝ ան կը հիւծի, կը հիւանդանայ եւ ասիկա բոյսին մէջ՝ զգացումի գոյութիւնը կ'ապացուցած է: Եթէ բոյսի ճիւղին մէկ տեղէն կտրենք՝ ցաւ մը կը զգայ ան, եւ կենդանիին թափած արիւնին տեղ՝ անիկա իր երակներուն մէջ գըտնըող քչիկ մը հեղուկը կը հոսեցնէ:

Պիտի առարկուի թերեւս թէ՛ այս հաշուով բոյսերու յօտումը փնասակար է: Բայց բոյսերը կենդանիներու պէս կրնան զգացողութենէ զերծ եղող մասեր ունենալ: Եթէ կենդանիներու եղունգը կամ մազերը կտրեն՝ բնաւ ցաւ մը չեն զգար ասոնք. բայց հոն՝ ուր եղունգները ու մազերը միսին կը փակչին, զգացումը զօրաւոր է: Այսպէս է նաեւ բոյսերուն համար:

Քանի մը գործնական ապացոյցներ՝ բոյսերու զգացումին՝ անօգուտ չպիտի ըլլան կարծեմ:

Ամէն մարդ գիտէ Զգայնիկը՝ որուն երբ դաշիք՝ կը սեղմէ իր տերեւները եւ կը միացնէ իր փոքր ճիւղերը կրցածին չափ խոյս տալով ցաւալի կցումէն՝ որմէ կը սոսկայ: Եւ Արփյասպին, որ շարունակ արեւին կողմը կը դառնայ, եւ իսուր ծառը՝ որ 1734ին Բարիզի մէջ ձեռքէ ձեռք անցած է, եւ ցերեկին կը գոցէ իր արեւները եւ ծաղիկները եւ գիշերը կը բանայ մեղի հոտ մը արտաբուրելով, և Հապէշիստանի քնազօր՝ որ տխուր ծառին հակառակը, կ'ապրի մինչեւ կէսօր եւ կը նուաղի այնուհետեւ՝ մինչեւ արեւին մայրամուտքը ու կը թաղուի հողին մէջ՝ յաջորդ առտու վերածնելու համար: Եւ տակաւին քանի՞ քանի՞ բոյսեր կան՝ որոնց այս տեսակ հետաքրքրաշարժ մասնայատկութիւնները՝ ապացոյց են բոյսերու զգացումին:

Լոնսօնի գիտնական օրաքերքը Տոտիէսի պարանոցին (Բանամայի արեւել. մասը) մէջ գտնուող անտառ մը կը յիշէ՝ որուն բոլոր ծառերը զգայնիկ են եղեր:

Ռէտի գիտունը՝ որ փորձերու մասին հեղինակութիւն մը կը կազմէ՝ կը պատմէ թէ Լիվօրնօ գացած ատեն ծառի մը վրայ գրտած էր նարինջի մեծութիւնով եւ սունկի գոյնով խնձոր մը՝ զոր ծովային սունկ կը կոչէին: Ահաւասիկ ինչ կը գրէ ասոր համար:

« Ուզելով տեսնել իր կողմութիւնը, հազիւ թէ դանակը կը մօտեցնէի զանիկա ձեղքելու ու բանալու համար, այս խնձորը իւրաքանչիւր ծակուածքի եւ բաժանումի՝ զոր կ'ընէի իր վրայ, կեղեւը կը խորշովէր, կը կծկտէր և յայտնի նշաններ կուտար՝ զգացումի և շարժումի: Իր ներքին մասը սակայն կը պարունակէր աղի և վճիտ հեղուկ մը՝ ու բազմաթիւ թելիկներ՝ որ կը տարածուէին ամէն կողմ, առանց կարգի »:

Քօլօնն հետեւեալ տեղեկութիւնները կուտայ մեզի:

« Դիտած եմ շատ մը բոյսեր՝ որոնք իրենց ծաղիկները կը բանան և կը տարածեն իրենց մազմզուկները, երբ արեւը կ'երեւի, և երբ օդը զեղեցիկ է ու պայծառ: Երբ պիտի անձրեւէ՝ ամէնն ալ կը գոցուին, և այս նշանը աւելի վստահելի է քան ծանրաշփինս »:

Եւ ուրիշ տեղ.

« Պատուհաններէս մէկուն վրայ կէսօրին ատեն, քանի մը ոսկենարգէսներ տնկած էի երկու յախճապակիէ ծաղկամանի մէջ: Մինչեւ Յունվար 15 օդը բաւական մեղմ ըլլալով՝ իրենց բողբոջները (pignon) տերեւներ արձակած էին սովորականին պէս: Այդ օրը օդը յանկարծ ցրտացած ըլլալով այս բոյսը կարծես թէ

գոցուեցաւ կամ ծածկուեցաւ հողով՝ ցուրտէն պահպանելու համար։ Այս փորձը կրկնեցի յաջորդ տարիները շա՛տ անգամ, թողելով ոսկինարգէսներուն բողբոջներուն գրեթէ երեք չորրորդ մասը թաղուած՝ եւ ամէ՛ն անգամ նոյնօրինակ պարագաներու մէջ միեւնոյնը տեղի ունեցաւ։ Այս զգայականութիւնը վերագրեցի Տէքարթի նուրբ նիւթին, եւ մտածեցի որ այս նո՛յն նիւթը կրնար նաեւ արտադրել միեւնոյն արդիւնքը՝ Սիպերիացիներու եւ Լաբոններու վրայ՝ որոնք երկրին վրայ կապրին երբ տաք է օդը, և գետինը կը մոնեն՝ երբ ցուրտ է։ Իրողութիւն մը որ կարծեմ շա՛տ պիտի կարճեցնէր այն հեռաւորութիւնը՝ զոր մեր փառասիրութիւնը դրած է բոյսին և մարդուն մէջ։»

Կասանտի գիտունը (1592--1635) ի նպաստ կը վկայէ բոյսերու՝ զգացում և իրենց վիճակին գիտակցութիւնը ունենալու կարծիքին, և դիտել կուտայ թէ՛ բոյսերը իրենց արմատները կը տարածեն մինչեւ հոն՝ ուր կրնան գտնել իրենց բնութեան յարմար սնունդ մը։ Թէ անոնք ետ կը դառնան այն տեղերէն՝ որ իրենց անյարմար են, եւ կ'անցնին նոյն իսկ քարերու մէջէ՛՝ զանոնք ծակելով, հասնելու համար իրենց ճաշակին յարմար սնունդի մը։ Որթին մօտը երբոր կաղամբ մը տնկենք, անիկա իր ճիւղերը հակառակ կողմը կը դարձնէ, իբրեւ թէ կաղամբին հօտը անհաճոյ ըլլար, եւ նշանաւոր փիլիսոփայ գիտունը ատկէ կ'եզրակացնէ թէ՛ բոյսերը ներքին զգացում մը ունին՝ որ իրենց վիճակին յարաբերական գիտակցութիւն մը կուտայ։

Պիւֆօն կը գրէ.

«Եթէ ուշադրութիւն ընենք արմատներու եւ տերեւներու գործարանաւորութեան և կատարած գործողութեան՝ պիտի գիտնանք իսկոյն թէ՛ արտաքին գործարաններն են որոնցմով սնունդ կ'առնեն. պիտի տեսնուի թէ արմատները կը դառնան արգելքի մը կամ գէշ հողի երակի մը առջեւէն՝ գտնելու համար լաւ հողը։ Թէ նոյն իսկ արմատները կը բաժնուին կը բազմապատկուին և միշտ ձեւ կը փոխեն բոյսին սնունդ հայթայթայթելու համար։ Եւ աւելին կայ, բոյսերը ունին արտադրելու այն միեւնոյն կարողութիւնը՝ զոր ունին կենդանիները, և եզակի ան պարագան սա՛ է որ կան կենդանիներ՝ որ բոյսերուն պէս եւ միեւնոյն միջոցով յառաջ կուգան։ Լուիճներու (puceron, Ֆիսան պիթի) բազմապատկումը՝ բացարձակապէս բոյսերու հունտով բազմապատկումին կը նմանի։ Պողպտոդներունը՝ (polype, բիսալիօթ) որ կ'ըլլայ զանոնք կտրելով, կը նմանի ծառերու չաչով բազմապատկումին։ Համառօտելով, բոյսերը կը սնանին, կը բազմանան, ենթակայ են հիւանդութիւններու, մահուան. ուրեմն անոնք կ'ապրին։ Կը մօ-

տենան անոնց՝ որ իրենց համար օգտակար են, կը հեռանան անոնցմէ՝ որ վնասակար են. իրենց համար կ'որոշեն ո՛ր եւ է հող մը, ո՛ր եւ է դիրք մը. կ'ընտրեն իրենց սնունդը, զանիկա կը մարսեն. աւելը կը շրջեցնեն մանաւանդ հիւանդ կամ ծարաւի մասերէն՝ զանոնք նորոգելու համար. ուրեմն անոնք կը զգան: Այս ամէնը մտածել կուտան, եւ տիեզերական ոգին՝ որով աշխարհը օժտուած կը կարծէին մեր նախնիքները, միայն ցնորք մը չպիտի ըլլար:»

(Շարունակելի)

ԳԼԱԿ ՀԻՆԵՆՅ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻՔ

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԷՆԷՆ ԲԱՐՁՐ ՓԱՐՈՍԸ

Պարոն Պարթօլտի, ֆրանսացի արուեստագէտին շինած սոյն արձանը՝ ԺԼ. դարուն մէջ շինուած արձաններու հսկան է. թէ՛ արուեստական ճարտարութեամբ եւ թէ՛ նիւթական մեծութեամբ: Արձանը՝ Ֆրանսայի մէջ ի Բարիզ, Պարթօլտի եղբայր գործարանին մէջ շինուեցաւ եւ որ Նիւ-Եօքի նաւահանգիստին մէջ Պէրօէ կղզին հաստատուեցաւ՝ ծառայելու համար գիշերները ամբողջ նաւահանգիստը լուսաւորելու ելեքտրական լոյսով:

Սոյն արձանը Ֆրանսական ազգին ծախքով եւ Ֆրանս-Ամերիկեան ընկերութեան միջոցաւ նուէր տրուեցաւ ի յիշատակ Ամերիկեան կառավարութեան հաստատման հարիւրամեակի տօնին առթիւ, որ կատարուեցաւ 1876ին:

46 մէթր է փարոսին մեծութիւնը, ոտքերէն մինչեւ աջ ձեռքը բռնած ջահը, նոյնչափ բարձրութիւն ունի պատուանդանը, եւ այսպէս ծովուն երեսէն 90-100 մէթր բարձրութիւն պիտի ունենայ. իրեն քով իբր գահած մը թողլով Հռոգոսի արձանն, որ հազիւ 40-43 մէթր բարձրութիւն ունէր:

Այս մեծութեամբ արձանի մը շինութիւնն յղանալ ո՛րչափ ալ դժուարին է՝ ա՛լ աւելի դժուարին է անոր շինութեան եղանակն ալ որոշել. Պղնձէ միակտուր արձան մը անկարելի է 46 մէթր բարձրութեամբ շինել. եթէ մաս առ մաս պատրաստէին՝ այն ատեն դարձեալ մասերը կցելու դժուարութիւնը կար: Արդէն թափածո շինուած մետաղեայ արձան մը այնքան ծանր կը կշռէ որ միլիոններով հոխաներու չափ ծանր պիտի ըլլար այս արձանն ալ:

հետեւաբար ֆրանսացի արուեստաւորք հետեւեալ կերպիւ շինեցին :

Նախ պատկերը շինել տրուին Պ. Էյֆէլ երեւելի ճարտարագէտին, որ արձանին ձեւը յղացած էր : Ապա բուն արձանին $1\frac{1}{16}$ ինչափ փոքր մէկ օրինակը շինեցին որ ունէր 2 մէթր 11 բարձրութիւն յոտից գլուխ : Յետոյ ասոր քառապատիկ մեծը շինեցին՝ որ իսկականին $1\frac{1}{4}$ ն էր եւ ունէր $8\frac{1}{2}$ մէթր բարձրութիւն, և վերջապէս ձեռնարկեցին բուն արձանին շինութեան :

Այս ալ հետեւեալ կերպով կատարուեցաւ :

Չափագիտական զանազան միջոցներով՝ որ համեմատութիւնները ճշգիւ պահելու կը ծառայէին՝ արձանին այլ եւ այլ մասերը շինեցին, ինչպէս՝ թեւերը, գլուխը, ձեռքի ջահը, պարզապէս փայտէ կմախքով, որուն վրայէն գաճով վերջնական կաղապարներն առին : Նոյն կմախքը ամբողջովին երկաթէ շինուեցաւ մէկ կողմանէ, եւ միւս կողմանէ պղնձէ բարակ տախտակներ ծեծելով մարմինին այլ եւ այլ ձեւերը կ'առնէին կաղապարէն օրինակելով եւ երկաթեայ կմախքին վրայ գամելով : Սոյն արձանին $\frac{1}{16}$ շինութիւնն թէեւ այսչափ համառօտիւ պատմեցինք, բայց ութ տարիէն աւելի տեւեց : 1876ին գաղափարը յղացան եւ դեռ 1884ին նոր



աւարտեցաւ արձանը: Ինչպէս որ ըսինք, 46 մէթր է արձանին բարձրութիւնը, ըսել է՝ Պոլսոյ Աթ մէյտանը գտնուած միակտուր կոթողէն 16 մէթր աւելի բարձր: Յուցամատը ունի 2,45 երկայնութիւն եւ 1,44 շրջապատ: Եղունգը 0,33: Գլուխը առանձինն 4,40 բարձրութիւն ունի, աչքը 0,65 լայնք եւ քիթը 1,12 երկայնութիւն: Կ'ըսուի թէ սոյն արձանին վրայ աշխատող գործաւորք որչափ կը յառաջանային սոյն գործին մէջ, այնչափ զարմանքնին կը շարժէր իրենց փոքրկութեան վրայ՝ երբ քիթին ծակերէն կը մտնէին կ'ելնէին: Մեր ընթերցողներուն գաղափար մը տալու համար սոյն հսկայ արձանին մեծութեան վրայ, պէտք է երեւակայել բարձրահասակ մարդ մը, որ երբ արձանին շրթունքներուն վրայ կայնի՝ հազիւ գլուխը արձանին արտեւանունքին կը հասնի: Կ'ըսուի նաեւ թէ Պ. Պարթօլտի իւր մայրն օրինակ առած է այս արձանին, որ գեղեցկութեան եւ կազմուածքի մասին նշանաւոր է:

Գլխուն գագաթէն եօթը ճաճանչներ կը ծնին, ոսկեզօծեալ, որով ցերեկին արեգական ճառագայթները ցոլացնելով կը փայլին եւ գիշերը ելեքտրական լոյս կ'արձակեն եօթը տարրեր ուղղութիւններով, եւ ինչպէս ըսինք, այս արձանը կը ծառայէ իբր փարոս: Ծաճանչներն ունին $3\frac{1}{2}$ մէթր երկայնութիւն:

1878ի Փարիզի մեծ արուեստահանգէսին մէջ ի տես դրուեցաւ գլուխը: Տասնէ աւելի անձինք կարող եղան այս գլխուն մէջ հաւաքուիլ: 26 անձինք ճաշեցին արձանին փորին մէջ եւ ծառայները առենայն դիւրութեամբ կը շրջէին: Աջ թեւին մէջ սանդուղ մը կայ՝ որով մինչեւ ջահին քով կ'ելլուի: 15 հոգի դիւրութեամբ կը շրջին ջահին բոլորտիքը, ուր պիտի կենան նաւահանգստի պահպանք:

Սոյն հսկայ արձանը 350 կտորի վերածուելով՝ փոխադրուեցաւ ի Նիւ-Եօրք. ամբողջ արձանին ծանրութիւնն է 200,000 քիլոկրամ եւ բոլոր գործին համար ծախք եղած է մէկ միլիոն ֆրանք:


1884 յուլիս 4ին, Պ. տը Լէսէփս, որ սոյն արձանը շինել տըւող ընկերութեան նախագահն էր, հանդիսապէս յանձնեց արձանը Պ. Մորթընի, որ զայն ընդունելու համար Ֆրանսա եկած էր: Օգոստ. 5ին Նիւ-Եօրքի մէջ զեռեղուեցաւ արձանին պատ. ուանդանին հիման առաջին քարն, որ միակտուր կրանիդէ ահաւոր մեծութեամբ զանգուած մ'էր, տեղույն մօտ պատրաստ էր՝ իջեցնելու համար համեմատական փոսի մը մէջ, ուր պիտի դրուէր նաեւ պղնձեայ անօթ մը, որու մէջ դրուած էին յիշատակաբաններ, մետալներ, դրամներ, Պարթօլտի լուսանկարն, օրագիրներ եւայլն:

Արձանն յուրիս 17ին Նիւ-Եորքի նաւահանգիստը հասաւ և շատ չքեղ հանդէսով ընդունուեցաւ։ Իսկ արձանի բացման հանդէսը կատարուեցաւ 1886 հոկտ. 27ին։ Քսան հազարէ աւելի հանդիսականք ներկայ գտնուեցան սոյն հանդէսին։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՃԱԽԱՐԱԿԸ

Այս խաղին մասնակցող տղաքները թուով ութ պէտք է ըլլան։ Չորս պզտիկները գետնին վրայ խաչաձեւ պիտի նստին ոտքերնին ոտքերնուն դէմ դրած։ Իսկ մնացեալ չորս մեծերն ոտքի վրայ պիտի կենան նստող չորս պարոններուն ձեռքերէն բռնած ըլլալով։ Երբ խաղին սկզբնաւորութեան նշանը տրուի, այն ատեն փոքրիկները գետնէն վեր պիտի ելլեն առանց ոտքերնին ի-



րենց նախկին դիրքէն հեռացնելու։ Այն ատեն մեծերը պիտի սկըսին ճախարակի նման արագաբար դառնալ աջ և ձախ, մինչեւ որ փոքրները չկարենալով դիմադրել այդ բոլորակաձեւ շարժումին, ոտքերնին իրարմէ զատուին։ Խաղն այն ատեն կը վերջանայ երբ տղաք ամէնքը միասին դադրին շարժելէ եւ ամենայն կանոնաւորութեամբ ոտքի վրայ ելլեն։ Կը խրատենք խաղէն վերջ քիչ մը ժամանակ հանգիստ առնուլ եւ այդ դադարի միջոցին չպաղեցնել մարմինն քրտինքն եւ ո՛չ պաղ ջուր խմել, մինչեւ իսկ ծարաւ դիրենք նեղէ։

ՄՏԱՄԱՐՁԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. — Ի՞նչ նմանութիւն կայ ընթացող կառւի մը անիւներուն եւ փայող մարդուն մը ոտներուն միջեւ :

2. — Ի՞նչո՞ւ համար փառերը կը ճաթոսին եւ կտորները կը ցասկեն երբ կրակին մէջ ձգենք :

3. — Ունիմ չորս մաս ես, իսկ միայն
Մէկ բթամաս քեզի նման.
Կեանքս մ'առնեմ, ո՞վ անխորհուրդ,
Զի ընծեմնեմ քեզի մեծ օգուտ,
Զունիմ ոսկոր : միս, որ արիւն՝
Բացած վերքերեղ առաս հեղուն :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Տեճեմ Մասեմ. 8. Խ. 4. — Ստացանք եւ յանձնարարած եօթը
Լեթալիքները ղրկուեցաւ : — Ամբողջ հաւաքածոն՝ 45 ղրուշ է
թղթատարի ծախքով միասին. իսկ եթէ երկու թիւերը (6 եւ 11)
պակաս եղած հաւաքածոն ուզէք՝ 35 ղրուշ է :

Տխարպէիք. Լ. Ս. — Ստացանք յօդուածը, խորին շնորհակա-
լութիւն : — Ցուցակը կը խրկուի : — Մ.ի յանձնարարութիւնը
փութով կը պատրաստուի :

Սիվրի հիսար. Ս. Պ. — Ձեր խնդրած առաջին հատորը ամ-
բողջ չկայ. 3 թիւ պակաս է : 8 եւ 16 թիւերը խրկուեցան :

Խարբերդ. Զ. եւ այն ամէն յօդուածագիրներուն. — Կեղծ ստո-
րագրութեամբ որ և իցէ յօդուած անընդունելի է :

Քեօթահեա. Մ. Շ. — Ստացանք շնորհակալ ենք : — 2 ղրշ.ի
փուլ չենք ստացած : 31րդ թիւը ղրկուեցաւ : — Ձեր յանձնարա-
րութիւնը կը կատարուի :

Էրայա. Կ. Գ. — Ձեր հրահանգին համեմատ նոյն բաժանոր-
դին խրկուեցաւ թիւերը :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԻՄՔԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Խիւ 33, Իզտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարին սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի չարա-
թական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը
պիտի յատկացուի Առաջնորդ Վանառականացի, 24 էջ,
Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ Վանառականացի 12 տետր գաւ առնել ուզողը պէտք
է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկերեան
Ներսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրզրում, Կարապետ էֆ. Գօնեան
Թեֆլիս, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Ներսիսեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Միացեալ-Նախանգներ, Մ. Մ. Գարակապուրեան և Հնկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Ներսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլերեան
Սիմ հանի Բոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Բօքրի » » »
Տիւրքմէն, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի որ տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ
Հանրագիտակի բաժնեգիրն և կամ մանր յանձնարարութիւններու
փոխարժէքը ի՞նչպէս շրջելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոյ՝ դնել նամա-
կին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակա-
դրոյ՝ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհե-
տեւ մեր ձեռքը հասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: